





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ե ԿԵԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱԾՈՅՏԱԿԱՆ ԵՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵԴՐԲԵՋՆԻ ՀՅՈՑ ԹԵՄԻՆ



Եպտեմբերի 20-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Բաքու, հովվապետական այցելության համար:

Առավոտյան ժամը 9-ին, Մայր Աթոռի ամբողջ միաբանության և Հոգևոր Ճեմարանի աշակերտության առաջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը իջնում է Մայր Տաճար աղոթելու: «Տէր, ուղղեա՛ր զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Ազնաւլորյանը «Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց» բնաբանով միաբանության անունից բարի ճանապարհ է մաղթում Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև, Մայր Տաճարի զանգերի դողանքների ներքո, շարժվում է Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը դեպի Երևանի օդանավակայանը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը, քահանայից դասը և Երևանի եկեղեցական խորհուրդների անդամները:

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-

Հովհաննիսյանը և Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և Տ. Հուսիկ արքեպա Սանթրույանը:

Ժամը 11.10-ին ինքնաթիռը թռիչք է առնում:

Ինքնաթիռի արժաթափայլ թևերի տակ փռվել է Երևանի և ամբողջ Արարատյան դաշտավայրի աննման համայնապատկերը:

Մի ժամ հետո արդեն աղբրեջանական հողումն ենք:

Ինքնաթիռը մի քանի րոպե վայրէջք է կատարում Կիրովաբադում, ապա թռիչք առնելով Երևանի օդանավակայանում հայ հավատացյալների հոծ բազմությունը ջերմ և խանդավառ դիմավորում է Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետին դիմավորելու են եկել Աղբրեջանի թեմական խորհրդի անդամները և քահանայից դասը, գլխավորությամբ Աղբրեջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանի: Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Աղբրեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի լիազոր պ. Մամեդովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու, մահմեդականների և այլ կրոնական համայնքների ներկայացուցիչները: Դիմավորողների մեջ են նաև Վեհաժայրը, Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Առաքելյանը և Հովհաննես սար-

կավագը, որոնք մի քանի օր առաջ ժամանել էին Բաքու:

Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի լիազոր պ. Մամեդովը ջերմ խոսքերով ողջունում է Վեհափառ Հայրապետի ժամանումը Ադրբեջանական Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Բաքու:

Նորին Ս. Օծուքյունը իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար:

մի հավատացյալ հայ ժողովուրդը ոտքի է կանգնել՝ արժանավայել կերպով դիմավորելու իր սիրեցյալ Հայրապետին: Քաղաքի կենտրոնում բարձրացած հայոց եկեղեցում հավաքվել է հոծ բազմություն: Անընդհատ ղողանջում են եկեղեցու զանգերը: Երբ երևում է Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը, բազմությունը ուրախությունից ալեկոծվում է: Հազարավոր ձեռքեր օդ են բարձրանում և ծափահարում, Ամեն կողմից լսվում են բացականչություններ. «Բարի՛ գալուստ



ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այնուհետև ինքնաշարժների շարանը լայն, ասֆալտապատ ճանապարհով սլանում է դեպի Բաքու Մերձակա և հեռավոր տարածությունների վրա երևում են նավթահորերի բազմաթիվ երկաթյա աշտարակները: Գրտնելվում ենք հարուստ նավթաշխարհի կենտրոնում՝ Բաքվում:

Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության լուրը մի քանի օր առաջ արդեն հասել է Բաքու և տարածվել ամբողջ եղբայրական Ադրբեջանով մեկ, ուր ապրում են հայեր, Հայաստանյայց Եկեղեցու զավակներ: Բաքվի թեմը, Վեհափառ Հայրապետի այցելությանը, ապրում է ուրախության և խանդավառության մի հիշատակելի օր: Թե-

վեհափառ Հայրապետին», «Կեցցե՛ Հայոց Հայրիկը», «Կեցցե՛ Ս. Էջմիածինը»: Դիմավորողների մեջ կան բազմաթիվ ադրբեջանցիներ և ուսանելու Եկեղեցու արևմտյան մոտքի դիմաց Վեհափառ Հայրապետը զգեստավորվում է և ամպհովանու տակ, աղոթքով, խնկով և «Հրաշափառ»-ով հանդիսավորապես առաջնորդվում դեպի եկեղեցի: Փոթորկվում են հոգիները: Բուրբուրի դեմքերին և աչքերի մեջ փայլում են ուրախությունն ու ժպիտը: Ուրախ է նաև Վեհափառ Հայրապետը: Բազմության միջից, թևերը թափահարելով, թռչում են տասնյակ սպիտակաթուղթ աղալինիներ, ավետելով Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալուստը:

Դրսից, եկեղեցու արևմտյան դռան վերին-վում, կախված է Վեհափառ Հայրապետի մեծադիր նկարը, «Հովիւ քաջ զանձն՝ իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց» վերտառութեամբ: Ս. Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը մտասուլջ աղոթում է: Ժողովուրդը անընդհատ եկեղեցուց ներս է հոսում:

Եկեղեցական արարողութեան ավարտից հետո, Ադրբեջանի և Թուրքեստանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեւորն Տ. Տիրալը վարդապետ Մարտիկյանը Վեհափառ Հայրապետին է դիմում բարի գալըստյան սրտագին ճանով:

Վեհափառ Տե՛ր, Բաքվի և Ադրբեջանի հայ հավատացյալ ժողովուրդը վաղուց էր սպասում Ձեզ, այն օրվանից, երբ Դուք եկաք մեր թեմը իբրև առաջին արտասահմանյան եպիսկոպոսը: Հուլիս օրախ ենք, որ այսօր Դուք գալիս եք մեզ մոտ արդեն իբրև Ամենայն Հայոց Հայրապետ: Այցելելով արտասահմանյան և մեր ներքին թեմերը, շնորհաբար նաև մեզ: Եթե ցայժմ ընդհանրապես ժողովուրդն էր ամեն անգամ գնում Ս. Էջմիածին՝ այնտեղ մխիթարություն, հոգևոր լիցք ստանալու և վերանորոգվելու, ապա այսօր Դուք եք էջմիածնից գնում ժողովրդի մեջ՝ տալու նրան այդ լիցքն ու հոգևոր վերանորոգությունը:

Մեր ժողովուրդը երջանիկ է այսօր, որ համաձին Ձեզ ունի եկեղեցաշին, մեծ հայրենասեր և անձնդիր Հայրապետ:

Ներկա պայմաններում, երբ մեր ամբողջ ժողովուրդը՝ բանվոր, գյուղացի, մտավորական, համառորեն և անսահանջ պայքարում են խաղաղության հաղթանակի մեծ գործի համար, և երբ բարեխիղճ գիտական աշխարհը կոչ է անում մարդկությանը՝ թույլ չտալ, որ այսուհետև մեր կապույտ երկինքը ծածկվի պատերազմի կարմիր կրակներով, Դուք եւ, իբրև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու քաջ հովիւ, Ձեր փառապանծ նախորդների նախանձախնդրությամբ, պայքարում եք և կոչ անում ողջ մարդկությանը՝ չհանդուրժել, որ խաղաղության և անմեղության սպիտակ աղավինն նորից ներկվի կարմիր արյունով:

Այսօր Ձեր շնորհաբաշխ այցելությամբ այդ ոգին եք բերում մեզ:

Ադրբեջանի ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը անհունապես հավատարիմ է ու նվիրված մեր դարավոր սրբություններին, մեր հավատի դարավոր կենտրոն Ս. Էջմիածնին, մեր հարազատ Հայրենիքին և Ձերդ թանկագին Վեհափառությանը: Եւ, իբրև առաջնորդական տեղապահ և թարգմանը մեր համայնքի հայ հավատացյալների զգացմունքների և խոհերի, հավատարմացնում եմ

Ձերդ Ս. Օծովյանը, որ մեր ժողովուրդը այսուհետև ևս միշտ թարմ ու վառ պիտի պահի հավատարմության այդ ազնիվ զգացմունքները: Ձեմ տարակուսում, որ մեր թեմում հղած ժամանակ, Դուք ամեն քայլափոխում առիթը պիտի ունենաք այդ նկատելու և պիտի շրջապատվեք խանդավառ և ջերմ սիրով, Ձեր զավակների անկեղծ գուրգուրանքով և հոգատարությամբ:

Ադրբեջանի հայոց թեմի և անձամբ իմ անունից սրտագինս ողջունում եմ Ձերդ Վեհափառության բարի գալուստը և ցանկանում Ձեզ երկար և երջանիկ օրեր՝ առաջնորդելու մեր Եկեղեցին և ժողովուրդը լավագույն կյանքի և ապագայի:

Համբուրում եմ Ձեր օծյալ Ս. Աջը:

Այնուհետև խոսում է Վեհափառ Հայրապետը:

«Ողջւյն ձեզ, սիրելի՛ հայեր: Ս. Էջմիածնեն Ամենայն Հայոց Հայրապետը եկեր է ձեզ մոտ՝ բերելու ձեզ բոլորիդ, բոլոր հայ հավատացյալներուն՝ սիրո ողջույն և հայրապետական օրհնություն և լավագույն մաղթանքներ ձեր բոլորիդ ֆաշառողությամբ, ձեր կյանքի խաղաղության և ձեր բոլորիդ շինարար գործոց հաջողության համար:

Շնորհակալ եմ ձեզմե, որ այսօր մեծ բով և հոգիի այսօր շնորհությամբ դիմավորեցիք Մեզ, որպես հարազատ զավակներ մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի:

Ս. Էջմիածինը հայ ժողովրդի հավատի կեդրոնն է հազար վեց հարյուր տարիներ ի վեր: Բազում դարեր շարունակ հայ ժողովրդի բարեպաշտ հավատացյալներ իրենց հոգիի աչքերով մնացել են սևեռած դեպի Ս. Էջմիածին: Ս. Էջմիածինը հայ ժողովուրդը լուսավորել է, տվել է առաջ հոգեկան մխիթարություն և միշտ աղոթել հայ ժողովրդի երջանկության և բարօրության համար, բոլոր ժողովուրդներու եղբայրության ու խաղաղության համար:

Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, շատ զգացված ենք, որ Մեզ դիմավորեցին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցիի; մուսուլմանական, ինչպես և մյուս կրոնական համայնքներու ներկայացուցիչները, որոնք Մեզ ուրախացուցին իրենց բարի գալուստի խոսքերով:

Մեծապես ուրախ ենք նաև այն բանի համար, որ Մեզ բարի գալուստի խոսքեր ուղղեց Ադրբեջանական ՍՍՌ Միեմիստրներու Սովետին առնթր Կրոնական գործերու խորհրդի լիագոր պ. Մամեդովը: Մենք խորապես մխիթարված կգտանք զՄեզ պ. Մամեդովի խոսքերով, որովհետև առ կերականացնե՛ ոչ միայն Կրոնական գործերու

խորհուրդը, այլև Ադրբեջանական կառավարությունը և ադրբեջանական ժողովուրդը:

Թույլ տվե՛ք Մեր սրտեն ողջույնի ջերմ խոսք ուղղել Ադրբեջանի կառավարության, ադրբեջանական և այստեղ ապրող մյուս բոլոր ժողովուրդներուն, Կասպյան ծովի հնարս փաղափ Քափվին:

Թող Տերը խաղաղության և երջանկության մեջ պահպանե այս փաղափր և անոր ժողովուրդը՝ ադրբեջանցիներ, ռուսեր, հայեր և բոլոր ազգություններու զավակներ, որոնք կապրին այս շեն, արևոտ և բարի երկրին մեջ:



Խ Ա Ջ Ա Հ Ա Մ Ի ՈՒ Տ Ի Ր

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Մենք Մեր հայրապետական այս առաքելության առթիվ երկու-երեք օր պիտի գտնվինք ձեր մեջ, քանի մը անգամ պիտի հավաքվինք այստեղ և աղոթենք առ Աստված: Կիրակի օր Մենք պիտի մատուցանենք հանդիսավոր սուրբ պատարագ, պիտի ծանոթանանք ձեզ և պիտի աշխատինք Մեր մասնակցությունն ալ բերել Ադրբեջանի հայոց քեմի հոգևոր-եկեղեցական շինության գործին, մխիթարելով հայ հավատացյալները: Ահա Մեր առաքելության իմաստն ու նպատակը:

Մենք վստահ ենք, որ դուք ևս հոգևոր մխիթարության պահներ պիտի ապրիք Մեզ

հետ միասին և մեկտեղ պիտի աղոթենք առ Աստված՝ վասն շինության Ս. Եկեղեցվոյս, հայ ժողովրդի և աշխարհի բեղմանուր խաղաղության:

Թող Տերը օրհնե ձեզ, գորացնե և պահպանե այժմ և հավիտյանս, ամեն:

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Խառուրիստ» հյուրանոցը:

Երեկոյան, Քափվի հայոց առաջնորդանիստ եկեղեցում պաշտվում է ժամերգություն, որին ներկա են լինում գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազաններն ու վարդապետները: Ժամերգությունից հետո, հոգեշնորհ Տ.

Հայրիկ վարդապետը խոսում է քարոզ «Երանի» խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» բնաբանով:

Սեպտեմբերի 21-ին՝ «Տօն ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ»:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը մատուցում է սուրբ պատարագ և քարոզում «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում դժուրեան քում քուհա զանօրէնութիւնս իմ» բնաբանով:

Պատարագին ներկա է խուռն բազմություն: Կեսօրին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով աչքելում է Նիպամի Գյանջեհի ան-

վան թանգարանը և 26 կոմունարների գեղեցիկ մահը:

Յերեկվա ժամը 3-ին, Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամը և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահի տեղակալ մուֆտի Ասադոլլան բարեկամական այցելություն են տալիս Վեհափառ Հայրապետին և ավելի քան մեկ ժամ ջերմ և սիրալիր զրույց են ունենում Վեհափառ Հայրապետի հետ:

Շեյխ ուլ-Իսլամը, ողջունելով Վեհափառ Հայրապետի ժամանումը Բաքու, ասում է. «Կարծում ենք, որ մեր այս հանդիպումը պետք է լինի սիրո և հղթարական հանդիպում»: Վեհափառը շնորհակալություն է հայտնում սիրալիր այցելության համար և ընդգծում, որ ինքը երկրորդ անգամ է հանդիպում Շեյխ ուլ-Իսլամին, որին նկատում է իր լավ բարեկամը: Շեյխ ուլ-Իսլամը հաճությամբ ընդունում է Վեհափառ Հայրապետի հրավերը՝ ներկա լինելու հաջորդ օրվա պատարագին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը իջնում է եկեղեցի և նախագահում կիրակամտի ժամերգության: Հավարտ ժամերգության, Վեհափառ Հայրապետը ոգեղուն ջարդոց է խոսում:

«Ցանկի մեզ, Տէր ամենակալ, զնաւատ, գոյս, գութ և զամենայն գործս առաքինութեան»:

«Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, գիշերային աղաթի այս պահուն, մեր Ս. Եկեղեցին կերգե Աստուծո փառք և կխնդրե Աստուծան, որ Ան ավիցեն, շատցեն հավատքը, հույսը և սերը մեր հոգիներուն մեջ ու նաև առաքինասեր գործերը մեր կյանքի ընթացքին:

Վստան ենք, թե ձեզմե ամեն մեկը այս պահուս խորապես հուզված է և հոգեկան խորունկ ապրումներ ունի, քանզի բոլորս միասին կգտնվինք մեր սուրբ եկեղեցիին կամարներուն ներքև: Սուրբ սեղաններու առջև մեր սիրտը կբանաւ Աստուծո, խոստովանելով մեր մեղքերը, ձգտելով դառնալ ավելի կատարյալ մարդ:

Քրիստոնեական կրօնքի նպատակն է ավելի կատարյալ դարձնել մարդկային էակը: Մենք բոլորս ստեղծված ենք հոգեղեն էություն և եերակա ենք սխալներու, սայթափումներու: Սակայն մեր սրտի և գիտակցության խորքերուն մեջ միաժամանակ ցանկությունը և իղձը ունինք ավելի մաքուր և սուրբ դառնալու, ավելի արդար բոլորու, ավելի կատարյալ, և եթե հնարավոր է, մոտենալու համար այն մեծ կատարելության, որ Աստված կկոչվի: Մենք մեր հոգիի ուժով կհավատանք, որ

կարող ենք մոտենալ այդ աստվածային կատարելության: Ահա այս իմաստով է, որ մենք կաղաթենք մեր եկեղեցիներուն մեջ: Այս իմաստով էր, որ մենք աղաթեցինք «Ցանկի մեզ, Տէր ամենակալ, զնաւատ, գոյս, գութ և զամենայն գործս առաքինութեան»:

Մենք կաղաթենք, որ Աստված ձեր հոգիներուն շերմություն շնորհե, ձեր մտքներուն՝ լույս և ձեր առաքինի գործերուն՝ հաջողություն:

Մեր Ս. Եկեղեցին ավելի քան 1 600 տարվան պատմություն ունի: Այդ երկար դարերու ընթացքին, մեր ժողովուրդը և Եկեղեցին շատ հաճախ սև օրեր ապրեցան: Ներկայիս ուրախ ենք հաստատելու, որ դժկարության օրեր աճած են և ահա, թե՛ Հայաստանի և թե՛ դրացի հանրապետություններու ու արտասահմանյան երկրներու մեջ Հայ Եկեղեցին կանգնած է ամուր հիմքերու վրա, կայծառաճառ աճ և իր սուրբ առաքելությունը կշարունակե մեր ժողովրդի կյանքին մեջ:

Նույն ուրախալի երևույթը Մենք կհաստատենք նաև այստեղ, գեղեցիկ Բաֆու քաղաքին մեջ, ուր հավաքված եք դուք բոլորդ՝ ցնծությամբ և շերմությամբ դիմավորելու համար Ամենայն Հայոց Հայրապետը և ստանալու Անոր օրհնությունը:

Ս. Էջմիածին նստած, Մենք կմտածենք, թե ինչպե՛ս շնեցնենք մեր բոլոր թեմերը, Աղբյուրների թեմն ալ մեզ, որուն կեդրոնն է Բաֆուն: Մենք ուրախ ենք, որ ձեզ նման հավատացյալներ շեն կպահեն Հայոց Եկեղեցին: Մենք ու դուք հաջողությամբ պիտի պսակենք մեր եկեղեցաշեն գործերը, որովհետև Աստված մեզ հետ է և մենք կվայելենք բարյացակամ վերաբերմունքը Սուրբ-տական բարեխնամ կառավարության, և ձեր պարագային՝ Աղբյուրների կառավարության, որ ամեն տեսակ աջակցություն կընծայե ձեզ բոլորիդ:

Մեր ցանկությունն է ա՛լ ավելի կազմակերպված տեսել Բաֆլի այս մեծ թեմը: Մենք ուրախ ենք, որ երկու տարին ի վեր, թեմական խորհրդի հետ միասին, թեմի գործերը ձեռնհասորեն կըկատարեն մեր սիրելի Տիրայր վարդապետը, Մեր ներկայացուցիչն ու լիազարը:

Տիրայր վարդապետը տակավին շատ երիտասարդ է: Քիչ անգամ կպատահի, որ այսպիսի երիտասարդ վարդապետ մը այնքան խոհեմությամբ, լրջությամբ և սիրով ղեկավարե նման կարևոր և մեծ թեմ մը: Մենք ուրախ ենք, որ Տիրայր վարդապետը նշանակելով այս գործին, չսխալեցանք, քանի որ կոտնենք և կհաստատենք, որ աճ

իր պարտականությունները կատարե հավատով, նվիրումով և ջերմությամբ:

Սիրելի՛ հավատացյալներ, հավատացած եղեք, որ Տիրայր հայր սուրբը կսիրե ձեզ բոլորդ, հարազատ եղբոր նման: Մենք վրտան ենք, որ դուք այ կսիրեք զինք, կհաշա-

վարդապետական լանջախաչ՝ որպես հայրապետական գնահատություն, որպեսզի անայտնենա ծառայի առավել ջերմությամբ, մինչև խոր ծերություն, և իր պարտքը կատարե Հայ եկեղեցիի և հայ ժողովրդի հանդեպ:



ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱՆԻ ԲԱԶՎԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

լեռեք և կօգնեք, որ այս քեմի գործերը հաջողությամբ ղեկավարվին:

Գնահատելով Տիրայր վարդապետի կատարած գործունեությունը և ընդառաջելով քեմական խորհրդի միջնորդության, Մեր հովվապետական այցելության առիթով Մենք կշնորհենք Տիրայր վարդապետին

Ապա Վեհափառ Հայրապետը Տիրայր վարդապետի վզից հանդիսավորությամբ կախում է ակամակուռ, ասկեղծ խաչը: Հավատացյալ ժողովուրդը խորապես խանդավառվում է այս հուզիչ տեսարանից և միաբերան ու բարձրաձայն հաստատում է՝ «Արժանի՛ է, արժանի՛ է»: Վերջում Վեհափառ



Հայրապետը օրհնում է կատարված աշխատանքը, քահանայից դասը, թեմական խորհուրդը, հավատացյալ ժողովուրդը:

Պատարագից հետո հավատացյալ ժողովուրդը, մեկ առ մեկ, ակնածանքով մոտենում է Վեհափառ Հայրապետին և ջերմությամբ համբուրում Նրա օծյալ Աջը և սուրբ խաչը:

Սեպտեմբերի 22, կիրակի: Առավոտյան ժամերգությունից հետո եկեղեցում և Նրա շուրջը՝ բակում ու մերձակա ճանապարհներին վրա հավաքվել է հավատացյալների մեծ բազմություն: Բաքվի թեմը ապրում է անմոռանալի ու պատմական օրեր:

Առավոտյան ժամը 12-ն է: Վեհափառ Հայրապետը հյուրանոցից առաջնորդվում է հայոց եկեղեցի, ուր դիմավորվում է ծափահարություններով և ժողովրդական խանդավառ ցույցերով: Բաքվի հայոց առաջնորդանիստ եկեղեցում հայրապետական հանդիսավոր առօր պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը: Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Սահակ և Տ. Վարդան եպիսկոպոսները, Տ. Հայրիկ և Տ. Տիրայր վարդապետները, Տ. Հուսիկ արեղան և Տ. Գրիգոր քահանան: Վերնատնից երգում է Ս. էջմիածնի և Բաքվի միացյալ երգչախումբը, ղեկավարությամբ պ. Հրանտ Գևորգյանի, ղեկավարության պատարագին ներկա են Ադրբեջանական ՍՍՄ Բնակարանների Սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի լիազոր պ. Մամեդովը և այլ պաշտոնական անձնավորություններ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը խոսում է հոգեշունչ քարոզ:

«Ողջոյն տու՛ք միմեանց ի համբոյր սրբութեան»:

«Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, կողջունենք ձեզ բոլորդ և կօրհնենք Ս. էջմիածնի անունով: Ձեզ ողջոյն կրենք Միածնաէջ Ս. Տառարեն, ուր 1600 տարիներ առաջ իջավ Աստվածորդին և հիմք դրավ ամենայն հայոց հավատքի կեդրոն Ս. էջմիածնի: Կրենք ձեզ ողջոյն Մայր Աթոռի մեր միաբանակից բոլոր եղբայրներեն, որոնք տիվ և գիշեր Մեզի հետ մեկտեղ կաղոթեն առ Աստված հայ ժողովրդի և Հայ եկեղեցիի կյանքի պայծառության և աշխարհի խաղաղության համար:

Ողջոյն կրենք ձեզ բոլորիդ Հայաստան աշխարհեն, ուր այսօր կապրի, կշինեն, կկառուցեն և կստեղծագործեն մեր ժողովուրդը:

Ողջոյն կրենք ձեզ մեր Վեհափառ Մասիսներեն, մեր Արագածեն՝ քաղաքաքար, Սևանեն և Մայր Արաֆսեն:

Ողջոյն նաև ձեզ բոլորիդ համայն հայ հավատացյալ ժողովրդեն՝ ձեր հարազատ եղբայրներեն և քույրերեն, որոնք կսիրեն ձեզ: Եվ կկամենալինք ավելցնել նաև՝ ողջոյն ձեզ արտասահմանի ձեր հայ եղբայրներեն և քույրերեն, որ տխուր հակատագրի բերումով, քաղաքական դաժան պայմաններու պատճառով, կապրին ի սփյուռս աշխարհի ցրված, բվով ավելի քան մեկ միլիոն:

Դուք գիտեք, որ անցյալ տարի, փետրվար—մայիս ամիսներուն Մենք գացինք արտասահման՝ այցելության տալու մեր ժողովրդին: Ճիշտ է, Մենք չայցելեցինք մեր բոլոր թեմերը, բայց տեսանք ավելի քան կեսը հայ ժողովրդի: Մենք այցելեցինք Լիբանան, Եգիպտոս, Անգլիա, Իտալիա և Ֆրանսա: Ամեն տեղ հայ ժողովուրդը համախմբված է իր Ս. եկեղեցիին շուրջ, ամեն տեղ կապրի Ս. Լուսավորչի հավատով և Ս. էջմիածնի տեսիլով ներշնչված: Արտասահմանի մեր բոլոր գաղութներու ազգային-եկեղեցական կյանքն ալ լավ կազմակերպված է: Ամեն տեղ դպրոցներ կան, ուր կուսանին մեր մանուկները մեր քաղցր հայոց լեզուն: Ամեն տեղ հայոց լեզուն կհնչե ազատ ու խոթյալ: Երբ Մենք այցելեցինք արտասահման, ամեն տեղ Մեզ կդիմավորեին խանդավառությամբ, երգով ու շարականներով, կարտասանեին Սովետական Հայաստանի մեր բանաստեղծներու՝ Ավետիք Խանակյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ էմինի և հին ու նոր այլ բանաստեղծներու և գրագետներու գործերեն:

Արտասահմանի մեջ հարցուցին նաև Ադրբեջանի հայ ժողովրդի և մասնավորապես Բաքվի և Լեռնային Ղարաբաղի հայերու մասին, որովհետև անոնք յսած էին, որ Մենք երեք տարի առաջ այ առիթը ունեցած էինք գտնվելու այստեղ: Մենք պատմեցինք անոնց ձեր հավատքի ու կյանքի մասին: Անոնք խորապես կուրախանային լսելով ձեր բարի լուրերը, ձեր եկեղեցացիներ և հանրագուտ աշխատանքներու մասին:

Մենք մեր անցյալին մեջ հաճախ վատ օրեր չառ տեսած ենք, բշտամիներ հաճախ մեր ցուր տաճարները ավեր են, մեր ժողովրդի զավակները գերել և հաճատակեր են: Երկար է հայ ժողովրդի մարտիրոսացման պատմությունը և տխուր:

Մենք, սիրելի՛ հավատացյալներ, փառ պիտի տանք Աստուծո, որ այդ օրերը վաղուց անցած են: 40-րդ տարին է, որ Սովետական իշխանության շնորհիվ, խաղաղամեր ոռոս մեծ ժողովրդի օգնությամբ, մեր Կովկասի ժողովուրդները՝ ադրբեջանցիները, վրացիները և հայերը, իրենց խաղաղ, շի-

հարար կյանքն են գտած, կապրին եղբայրաբար իրենց հայրենի սահմաններուն մեջ: Այս շատ գնահատելի է, և մենք ոչ մեկ բույս պետք չէ մոռնանք, որ Կովկասի ժողովուրդներու եղբայրությունը հաստատվեցավ շնորհիվ Սովետական իշխանության: Ամեն մեկ հանրապետություն առանձին-առանձին է, բայց միացած ենք մեկ մեծ ընտանիքի մեջ, որ կկոչվի բազմազգ Սովետական մեծ Միություն:

ներուն հետ միասին մեր պարտքը կատարել մեր ժողովրդի և Աստուծո առջև: Մենք այցելեցինք գրեթե մեր բոլոր թեմերը, և այսօր կայցելենք Ադրբեջանի թեմը: Ասկե 52 տարի առաջ այստեղ այցելած է մեր կաթողիկոսներեն Երանաշենի երիմյան Հայրիկը: Չեզմե մեծերը թերևս կհիշեն այդ երջանիկ օրը, երբ Ամենայն Հայոց Հայրիկը այս նույն եկեղեցիին մեջ պատարագեց և ֆարգեց: Այդ կես դարու ընթացքին շատ



ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ Պ. ՄԱՄԵԴՈՎԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱԳԵՏԻՆ

Սովետական բոլոր ժողովուրդները խաղաղություն կցանկան: Խաղաղությունը իրականություն է այսօր մեր մեջ և այդ է, որ մեզ ուժ կուտա՝ խաղաղությամբ լուծելու մեր բոլոր հարցերը:

Մենք շատ շնորհակալ եղանք, որ այստեղ Մեզ դիմավորեցին ոչ միայն հայերը, այլ նաև եղբայրական ադրբեջանցի ժողովրդի ներկայացուցիչները, չեմ և բարեկամական խոսքերով: Մենք այս բոլորը պիտի պահենք Մեր հոգիին մեջ իբրև լավագույն հիշատակ: Մենք կաղաթենք, որ այս սերն ու միությունը մնան միշտ անփակելի:

Միեկի՝ ժողովուրդ, հագիվ երկու տարի է, որ Մենք բարձրացած ենք Ս. Լուսավորչի Աթոռին վրա և կաշխատենք մեր միաբան-

փոփոխություններ եղան: Բա՛նու ֆաղափը նոխացավ, փարթամացավ: Մեր եկեղեցին, տխուր օրեր ապրելիս հետո, այսօր վերստին հառաչընթացի մեջ է: Մենք ահա նորեն հավաքված ենք ձեզ հետ միասին այս սուրբ տանարին մեջ աղոթելու: Մայր Աթոռ վերադառնալեն հետո Մենք հոգիով միշտ ձեզ հետ պիտի ըլլանք և Մեր ուշադրությունը պիտի սևեռենք նաև դեպի ձեր թեմը և Աստուծո ողորմությամբ ու Կառավարության օգնությամբ պիտի աշխատենք ա՛լ ավելի կազմակերպել ձեր հոգևոր կյանքը:

Կհրավիրենք ձեզ բոլորդ օր մը ուխտի գալ Ս. Էջմիածին, որպեսզի այնտեղ ալ, մեկ շունչ և մեկ հոգի դարձած, աղոթենք մեր պապերու Աստուծուն:

Միեկի՝ ժողովուրդ, վաղը երեկոյան Մենք կմեկնենք կիսովարադ և Լեոնային Դարաբադ՝ հովվապետական այցելություն տալու այնտեղի Մեր գավազներուն:

Կօրենքն է՝ ձեզ քայտդ և կաղորենք առ Աստված, որ Ան պանն ձեզ հոգով՝ առողջ և անվտանգ: Հեռու ձեզմե ամեն տեսակ գտնություն ու վիշտ, ձեր կյանքի նամբան թող ըլլա լուսավոր և ուղիղ: Ողջ լինով:

Մնացե՛ք հավատարիմ մեր սուրբ ավանդություններուն, մեր քաղցր լեզվին և մեր սրբություններուն:

Տերը թող միշտ պանն պանպանն զձեզ «ընդ հովանեաւ Աշոյն իւրոյ, այժմ և յալիսեանս, ամէն»:

Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, հոգեհանդիստ է կատարվում եկեղեցու արևմտյան մուտքի աջ կողմից գտնվող հանգուցյալ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գերեզմանի վրա: Մովածալվալ ժողովուրդը խոնավ է հիփեղեցու բակում, մերձակայքում: Շատեր բարձրացել են ծառերն ու կտուրները՝ այնտեղից դիտելու սրառառչ աբարողությունը: Վեհ ու հանդիսավոր հնչում է «ի վերին երուսաղէմ» շարականը, ցնցելով մարդկանց հոգիները:

Մեծավայտառակ Կարապետ եպիսկոպոսը չի մեկնել. նա միշտ ապրում է մեր մեջ և կապի հավիտյանս, հանդիսամատուլ ներշնչման և խանդավառության աղբյուր մեզ՝ երկրասարդ հոգեորակներին:

Երեկոյան ժամը 5-ին, «Ենտուրիստ»-ի ճաշարանի մեծ սրահում, Բաքվի հայոց թեմական խորհուրդը կազմակերպել էր մեծ ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ընդունելության ներկա էին ամիլիթան 40 հոգի, որոնց թվում Ադրբեջանական ՍՍՄ Միության անդամ Սովետին առընթեր Կոունական գործերի խորհրդի չիազոր պ. Մամեդովը և տղղափառ ոռանների, մուսուլմանների, հրեաների, բապտիստների ներկայացուցիչները: Վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ով բացում է սեղանը և առաջին բաժակը առաջարկում պ. Մամեդովի կենացը, իբրև Ադրբեջանական կառավարության և ժողովրդի ներկայացուցչի: Պ. Մամեդովը փոխադարձաբար առաջարկում է խմել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կենացը: Նա ասում է. «Վազգեն Ա հռչակված և հարգված է թե՛ Սովետական Միության մեջ և թե՛ ամբողջ աշխարհում, որովհետև նա հայտնի է ոչ միայն որպես կրոնական դործիչ, այլ նաև իբրև խաղաղության մեծ գործիչ»: Վեհափառի կենացը՝ խմվում է հոտնկայս և բուռն ծափահարություններով: Սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ մթնո-

նություն: Երգչախումբը, դաշնամուրի ընկերակցությամբ, կատարում է մի շարք հոգեվոր և ազգային երգեր:

Վեհափառ Հայրապետը այս անգամ բաժակ է առաջարկում Շեյխ տւ-Իսլամի և հանձին նրա Ադրբեջանի ժողովրդի հաջողության և բարօրության համար, մաղթում որ երկու կրոնապետների, ինչպես և երկու հղբայրական ժողովուրդների՝ հայերի և ադրբեջանցիների միջև գոյություն ունեցող դարավոր բարեկամական և սերտ կապերը է՛լ ամփի տմրապնդվեն ու պորանան:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախմբի ղեկավար պ. Հրանտ Գևորգյանի դաշնամուրի ընկերակցությամբ երգչուհի Ժողեֆինա Սեբեդյանը քաղցր ու թովիչ ձայնով հրգում է «Գետակի վրա թեքվի է ուռին» երգը:

Նորից խոսք է առնում Վեհափառ Հայրապետը:

«Այս քաղցր երգն հետո, Մենք կուզենք Լազր կենաց մը առաջարկել: Մեր այստեղ գտնվելու առաջին իսկ պահին Մեզ կըջջապանեն հերկայացուցիչներ Ռուս Ուղղափառ եկեղեցի: Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ, որովհետև Հայ և Ռուս Պրավասլավ եկեղեցիներու միջև գոյություն ունեցող բարեկամությունն ու համագործակցությունը վաղուց հայտնի են ամենուրեք: Այն օրեն, երբ հայ ժողովուրդը իր ճակատագիրը անփակելիորեն կապեց ռուս մեծ ժողովրդի հետ, այդ օրեն ալ սկսավ Հայ և Ռուս եկեղեցիներու բարեկամությունը: Հետևաբար խոսքը կվերաբերի ոչ թե տարիներու, այլ դարերու բարեկամության: Մեր օրերուն ալ այս պատմական բարեկամությունը առանձին իմաստ ստացավ: Եվ այդ կպարտինք այն հանգամանակն, որ այսօր մեր երկու եկեղեցիներն ալ կապին միևնույն պայմաններուն մեջ, այսինքն սովետական իրականության մեջ: Երկու եկեղեցիներն ալ կծառայեն իրենց ժողովուրդներուն և ազատության: Մեզ կմիացնեն նաև խաղաղության համար մղված պայքարը: Խաղաղության համար մղված պայքարի ճանապարհին վրա մենք միացած ենք և կհամագործակցենք, որովհետև այն կրխի մեր բրիստոնեական հավատի էությունը»:

Վեհափառ Հայրապետը վերջում առաջարկում է խմել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի, Ռուս Ուղղափառ եկեղեցու և ռուս մեծ ժողովրդի կենացը:

Բաքվի Ռուս Ուղղափառ եկեղեցու ավագ-երեց հայր Սեբեդյր խոսք առնելով դիմում է Վեհափառ Հայրապետին:

«Ձերք Սրբություն, ես խորապես համաձայն եմ Ձեզ հետ այն հարցում, որ հայ և

ուսւ ժողովուրդների միջև դոյութիւն ունի դարավոր բարեկամութիւն, որը ոչ ոք չի կարող վիճարկել: Մեր Եկեղեցիների միջև էլ դոյութիւն ունի իսկական բարեկամութիւն: Երկու Եկեղեցիներն էլ բաժանել են պատերազմների արհամիրքները և պաշարում են հանուն խաղաղութիւն: Ինձ ծանոթ է հանգուցյալ Գևորգ Զ-ը, որի աշխատանքը խոշոր ներդրում էր խաղաղութիւն ուժերի միավորման գործում: Ես հավատում եմ, որ նա այժմ էլ ապրում է մեր մեջ:

Ես, Բաքվի ուսւ հոգևորականութիւն և հովատացյալների անունից, սրտագին ողջունում եմ Ձեր բարի գալուստը Բաքու: Բաքվի ուսւ և հայ հովատացյալների ու

Ապա Վեհափառ Հայրապետ բաժակ է առաջարկում հրեաների և բապտիստների ներկայացուցիչների և հանձինս նրանց՝ Եկեղեցիների ու ժողովուրդների բարօրութիւն համար:

Սեղանների շուրջ ստեղծված մթնոլորտը դառնում է ավելի և ավելի ջերմ և խանդավառ: Ճաշկերույթը վեր է ածվում տարբեր ազգերի ու կրոնական տարբեր համոզմունքների տեղ մարդկանց համերաշխութիւն և սիրտ ցուլցի:

Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը խոսք անկելով ասում է.

«Ամենից զեղեցիկը բնութիւն մեջ միութիւնն է: Տարբեր գույնի և բույրի ծաղիկնե-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՐ ԴԵՅԻՆ ՈՒՎԻՍԼԱՄԻ ՀԵՏ

հոգևորականութիւն միջև գոյութիւն ունի սեր և բարեկամութիւն: Ձեր այցելութիւնը այդ բարեկամութիւնը է՛լ ավելի պիտի ամրապնդի: Քառասուն տարի է, որ ես աշխատում եմ աշտեղ և արեւ եմ ամեն ինչ, որ պետի այդ բարեկամութիւնը է՛լ ավելի ուժեղանա: Ես կարծում եմ, որ Ձերդ Սրբութիւնն այցը նոր էջ պիտի բաց անի մեր երկու ժողովուրդների բարեկամութիւն պատմութիւն մեջ:

Ձեզ մաղթում ենք հաջողութիւններ և երկա՛ր, երկա՛ր տարիներ:

Իրից կազմված փունջը շատ ավելի հոտափոխ և հաճելի է լինում: Այդպես են նաև մեր Սովետական Միութիւն բազմազգ ժողովուրդները: Ես հին մարդ եմ և լավ եմ հիշում, որ ցարիզմի ժամանակ մի ժողովուրդին թունավորում էին մյուսի դեմ և կազմակերպում ազգամիջյան ջարդեր: Այժմ այդ երևույթները չկան: Մեր բոլոր ժողովուրդները ապրում են եղբայրաբար և սիրով: Բաժակս բարձրացնում եմ սովետական բոլոր ժողովուրդների միութիւն, եղբայրութիւն և երջանկութիւն կենացը»:

Հուզված խոսում է նաև փաստաբան Ա. Կորոպլը.

«Ես կուզենայի առաջարկել այս բաժակը մարդկության բարօրության, խաղաղության և երջանկության համար: Առանց խաղաղության չի կարող լինել ոչ մի լավ բան: Անցյալում հոգևորականությունն արել է ժողովրդի համար այն ամեն բարին, ինչ հնարավոր է եղել: Այժմ աշխարհն ապրում է ծանր օրեր: Սիրտս խայտում է ուրախությունից, երբ այժմ հոգևորականությունը տեսնում եմ մի ընդհանուր և սրբազան գաղափարի՝ խաղա-

վեհափառ Հայրապետն ասում է եզրափակիչ խոսքը.

«Այս սեղանը եղավ ոչ միայն առիթ մը նյութեղեն բարիքներ ճաշակելու, այլ մանավանդ հոգեպես գոհանալու և հագեցնելու, զիրար ավելի լավ հասկնալու ու բարեկամանալու: Ահա երկու օրե ի վեր Մենք ծանոթություններ հաստատեցինք պ. Մամեդովի և կրոնական գանազան գործիչներու հետ: Եվ Մեզ այնպես կրվի, որ մենք հին բարեկամներ ենք: Խոր մտեմություն մը հաստատվեցավ մեր միջև: Օրինակի համար,



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՔՎՈՒՄ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

դության գաղափարին նվիրված: Հոգևորականությունը իր ձեռքին բռնած լուսավոր ջահը՝ առաջնորդում է ժողովուրդներին դեպի լուսավոր ապագա՝ դեպի խաղաղություն:

Ուստի ես խմում եմ ամբողջ հոգևորականության կենացը:

Խոսք են արձնում նաև Ադրբեջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրալը վարդապետը, Տ. Վահան ավագ քահանան և ուրիշներ:

Ծրգշախումբը երգում է «Սուրբ, սուրբ», «Հայաստան, երկիր դրախտավայր», «Սեղանն է առատ», «Միժեռնակ», «Կուժն առա» և ուրիշ երգեր:

Մենք նստելով պ. Մամեդովի կողքին, կիսսեինք ռուսերեն լեզվով, քեև Մենք լավ ռուսերեն չենք հասկնալ, բայց, կարծեք, մեր խոսած լեզվեն անգի՜ն կար լեզու մը, որով մենք կատարելապես հասկցանք զիրար:

Շնորհակալություն կհայտնենք պ. Մամեդովին և բոլորիդ, որ հարգեցիք Մեր սեղանը:

Թող Աստուծո օրհնությունը միշտ անպակաս բլլա մեր վրայեն, ամեն:

Բոլորը ոտքի են կանգնում: Վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ով և գոհարանական աղոթքով փակում է սեղանը:

Սեպտեմբերի 23-ին, կիրակի օր, ցերեկվա ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելու-

թշուն է տալիս Բաքվի ռուսաց եկեղեցուն։ Եկեղեցու ներսը և դուռը լիք է ժողովուրդ է՝ առաջ, հայ, ադրբեջանցի։ Զվարթագին հընչում են եկեղեցու զանգերը։ Ռուսաց եկեղեցու հովիվի հայր Սերգեյը, քահանաների հետ միասին, ափսոսի վրա դրված մեծ խաչով, եկեղեցու մուտքի առաջ դիմավորում է Վեհափառ Հայրապետին և սիրալիր ողջունում։ Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է եկեղեցուց ներս, համբուրում է Ս. Սեդանը և լուռ աղոթում։ Երգչախումբը քառաձայն երգում է Հայրապետական մաղթերը։ Բոլոր հուզված են մինչև հոգու խորքերը թափանցող երգի հնչյուններից։ Հատուկ արարողություն է կատարվում Հայ և Ռուս քույր եկեղեցիների ի Քրիստոս սիրո միություն, Վեհափառ Հայրապետի և ռուսաց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի արևշատուկյան և աշխարհի խաղաղության համար։

Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլոր ներկաներին և սրտագին բարեմաղթություններ անում Ռուս Ուղղափառ եկեղեցու հաջողության և ռուս ազնիվ ժողովրդի լուսավոր ապագայի համար։ Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ռուսաց եկեղեցու առաջնորդարանը, որտեղ ընդունելություն էր կազմակերպվել ի պատիվ Վեհափառ Հայրապետի։

Նույն օրը ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամին։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գեթաշնորհ Ս. Սահակ և Ս. Վ. սրբան սրբազաններ և Ադրբեջանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։ Վեհափառ Հայրապետը Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ ուլ-Իսլամի կողմից ընդունվում է ջերմագին և շատ սիրալիր կերպով։ Վեհափառ Հայրապետի և Շեյխ ուլ-Իսլամի միջև տեղի է ունենում սրտագին զրույց։ Շեյխ ուլ-Իսլամը ցանկություն է հայտնում զրույցի ժամանակ, որ նման փոխադարձ այցելություններ հաճախ լինեն, որպեսզի հայ և ադրբեջանցի ժողովուրդների պատմական բարեկամության կապերը առավել ամրապնդվեն։ Թարգմանչի դիրք կատարում է Ս. Տիրայր վարդապետը։ Զրույցի վերջում Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Շեյխ ուլ-Իսլամից, շնորհակալություն հայտնելով ջերմ և անկեղծ ընդունելության համար։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների

Սովետի նախագահ և հայտնի գրող Միրզա Իբրահիմովին և մոտ մեկ ժամ նրա հետ ունենում սիրալիր զրույց եկեղեցական խնդիրների վերաբերյալ։ Վերջում Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Մինիստրների Սովետի պ. Նախագահից լավագույն տպավորություններով և քաղցր հուշերով։

Սեպտեմբերի 23-ին, երեկոյան ժամը 9.50-ին Վեհափառ Հայրապետը ճեպլնթաց դնացքով մեկնում է դեպի Կիրովաբադ։ Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գեթաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Ս. Հայրիկ և Ս. Տիրայր վարդապետները և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Առաքելյանը։

Բաքվի կայարանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները, մամուլի ներկայացուցիչներ և բաղմամբիվ հավատացյալներ։

Առավոտյան ժամը 8.20-ին գնացքը ժամանում է Կիրովաբադ։ Կայարանում հավաքվել էր հսկայական բազմություն, որը խանդավառորեն և ջերմությամբ դիմավորում է Վեհափառ Հայրապետին։ Դիմավորողների մեջ են Կիրովաբադի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Ս. Նշան քահանա Բեյլեյանը և մյուս երկու քահանաները, եկեղեցական խորհրդի անդամները, քաղաքային խորհրդի, մուսուլմանների ներկայացուցիչները։ Վեհափառ Հայրապետի երևալը գնացքի աստիճանների վրա դիմավորվում է բուռն, խանդավառ ծափահարություններով և ցնծությամբ։ Բացականչություններով։ Վեհափառ Հայրապետը խաչակնքում է և օրհնում բուրիներ։ Դժվար է նկարագրել ժողովրդի խանդավառությունն ու ուրախությունը Վեհափառ Հայրապետի այս օրհնաբեր այցելության ժամանակ։ Այդ օրը անմոռանալի կմնա մարդկանց հիշողության մեջ, որպես պատմական տարեթիվ։

Վեհափառ Հայրապետը ավտոմեքենաներով առաջնորդվում է դեպի հայոց եկեղեցի։ Մեզ ուղեկցում են մոտ 50 ավտոմեքենաներ, որոնք անընդհատ ազդանշաններով ափսոսում են Վեհափառ Հայրապետի մուտքը Կիրովաբադ։ Հայոց եկեղեցու առջև հավաքվել է խուռն բազմություն։ Եկեղեցուց մի քանի հարյուր մետր հեռավորության վրա Վեհափառ Հայրապետի ավտոմեքենան կանգ է առնում։ Ժողովուրդը պարսպի պես կանգնել է ճանապարհի երկու եզրերի վրա։ Այստեղից մինչև եկեղեցի ճանապարհին փոխված են գորգեր ու ծաղիկներ։ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով ու զանգահարությամբ առաջնորդվում է եկեղեցի։ Եկեղեցու պարիսպների դարբասի վրա կապված է ծաղիկներից

կազմված սիրուն կամար, «Ամենայն Հայոց շնորհադարձ Կաթողիկոսին բարի գալուստ» վերտառովթյամբ:

Հանդիսավոր ընդունելության արարողությունից հետո վեհափառ Հայրապետը խաչով ու գավազանով բարձրանում է բեմը և խոսում:

«Սիրելի՛ ժողովուրդ հայոց: այսօր Աստուծո ռոգորմուրյամբ կգտնվիմք ձեր մեջ: Եկած ենք ձեզ մոտ, այցելել ենք Ադրբեջանի գեղեցիկ և փարթամ մայրաքաղաք Բաքուն, որ կիրակի օր սուրբ պատարագ մատուցիմք հոգեբանության մեր ներկայության: Շատ ուրախ և հոգեկան մխիթարությամբ յի օրեր ապրեցանք Մենք Բաքվի մեջ, շրջապատված հայ հավատացյալ ժողովրդի, ինչպես նաև մուսուլման կրոնի բարձրաստիճան ներկայացուցիչներու, Ռուս Ուղղափառ և մյուս քույր եկեղեցիներու ներկայացուցիչներու սիրով ու հարգանքով: Այլև ուրախությամբ պետք է նշենք, որ Մենք ջերմ ընդունելություն գտանք նաև Ադրբեջանական ՍՍՌ Գերագույն Ասվետի Նախագահության Նախագահ պ. Միրզա Իբրահիմովի կողմն, որուն հետ ունեցանք սիրալիք տեսակցություն, որպես երկու ժողովուրդներու ներկայացուցիչներ և որպես բարեկամներ: Եվ այդ առիթով Մենք պ. Նախագահին ներկայացուցիմք շարք մեր եկեղեցական հարցեր, որոնք պիտի լուծվին ի նպաստ Ադրբեջանի հայ հավատացյալ ժողովրդի: Մենք վստահ ենք, որ մեր գործերը հաջողությամբ պիտի պսակվին և դուք բոլորդ գոհացում պիտի ստանաք, ինչպես ուրիշ անդերու հայ հավատացյալներ:

Սիրելի՛ ժողովուրդ. Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, շատ հուզված ենք այս պահուս և շափազանք ուրախ, որ ինչպես Բաքվի մեջ, այնպես ալ այստեղ Կիրովաբադի մեջ դուք այսպես խաղաղապա ընդունելություն ցույց տվիք Մեզ: Ձեզ մոտ կուգա Ամենայն Հայոց Հայրապետը Ս. Էջմիածեն և ձեզ կբերե սիրո ռոգույն և հայրապետական օրհնություն: Մեր սիրտը լեցուն է բարի զգացումներով և մաղթանքներով ձեր բոլորիդ առողջության, ձեր կյանքի բարօրության և ձեր գործող հաջողության համար: Դուք մեր Եկեղեցիի հարազատ զավակներն եք: Հայ ժողովուրդը միշտ պատմական այլևայլ պատճառներով ցրված է ամբողջ աշխարհի վրա: Այսօր ալ այդպես է: Հայ ժողովրդի հազիվ մեկ երրորդը կապրի այսօր իր Մայր Հայրենիքի հողին վրա: Մյուս մեկ երրորդ մասը կապրի Եվրոպական ռուսալուրիկներու մեջ՝ Ռուսաստան, Վրաստան և Ադրբեջան: Բայց հայ ժողովրդի զավակները կապրին նաև ավելի հեռու երկրներու՝ Եվրոպայի, Նեփալոսի, Սուրիայի, Լիբանանի, Պարսկաստանի մեջ և Աստիանյան օվկիանոսին՝ այն կողմ: Հյուսիսային և Հարավային Ամերիկայի մեջ: Նույնիսկ բավականաչափ հայեր կապրին Ավստրալիայի մեջ: Այս օրերուն հայ ժողովուրդը հայկական եկեղեցի մը կշինե Ավստրալիայի մայրաքաղաք Սիդնեյի մեջ: Մեր ժողովրդի ավելի քան մեկ միլիոնը այսօր կապրի ի սփյուռս աշխարհի ցրված: Բայց հայր ուր ալ ապրի, ուր ալ մնա, հավատարիմ և հարազատ զավակն է Ս. Էջմիածնի և Հայրենիքի: Մեր ժողովրդի զավակները կպանեն ու կպանակեն իրենց հոգիներուն մեջ մեր սուրբ հավատք, մեր նախնայց ավանդությունները, հայոց քաղցր լեզուն: Անոնք կապրին Ս. Էջմիածնի սիրով, Հայաստան աշխարհի՝ մեր վերածնած Սովետական Հայաստանի կարոտով: Ս. Էջմիածինը այն արքայալու է, որտեղ հիմնվեցավ հայոց եկեղեցիներու Մայր Եկեղեցին, որտեղ է մեր հավատքի կեդրոնը: Ս. Էջմիածինը տված է հայ ժողովրդին հոգևոր սնունդ, յույս և ապրելու կորով: Ս. Էջմիածնի մեջ կաղապարված է հայ ժողովրդի հոգին: Ս. Էջմիածինը դարեւ շարունակ պահած է հայ ժողովրդի հոգիի աւիրությունը, զորությունը: Մեր ժողովուրդը անցյալի մեջ շատ դժբախտություններ է տեսած, բայց ապրած է ան իր հավատով, իր ապագայի նկատմամբ վառ հույսով:

Այսօր, սիրելի՛ հավատացյալներ, Ս. Էջմիածինը նորեն կվերաշինվի և կպայծառանա, ի մխիթարություն ամբողջ հայ հավատացյալ ժողովրդի: Մենք երկու տարի է յվեր, ինչպես գիտեք, Ս. Էջմիածնի մեջ կգործենք, կշինենք, կաշխատինք որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Շրջապատված ենք երեսասարդ հոգևորականներով, որոնք կաշխատեն Մեր կողմին:

Մենք ունինք Հոգևոր ճեմարան, ուր կուսանին այժմ 50 ուսանողներ, որոնք հոգևորականներ պիտի դառնան: Մեր Եկեղեցին այսօր կառնիմք ունի պատրաստված, հավատավոր և հայրենասեր հոգևորականներու քե՛ Մայր Հայրենիքի մեջ և քե՛ Սփյուռքի մեջ: Ս. Էջմիածինը և անոր շուրջը գտնվող հաստատությունները նույնպես կվերաշինվին:

Ահա այսպես, Աստուծո ռոգորմուրյամբ և Սովետական իշխանության օգնությամբ, մեր հոգիի ամբողջական ուժերով, պիտի աշխատենք, որպեսզի մեր Եկեղեցին առավել ծաղկի, պայծառանա և կազմակերպվի, որպեսզի մեր ժողովրդի հավատքը ալ ավելի ամրանա և մեր ժողովրդի սերը անի դեպի Ս. Էջմիածինը և մեր Եկեղեցին:

Սիրելի ժողովուրդ, մենք նախօրոք ծրագրած չենք այստեղ գալ, այլ այցելել մեր հին վանքերը՝ Գանձասար և Ամարաս: Սա-

կայն յկարողացանք ձեր մոտեն անցնիլ, առանց ձեզ տեսնելու: Ահա ջատ ուրախ եմք, որ եկանք էաև ձեզ մօտ, այս պատմական ֆաղափր՝ Նիգամիի ֆաղափր, ուր բոլոր ժողովուրդները ջատ հինեն կապրին եղբայրաբար և համերային:

Ողջո՛ւյն մեծ Նիգամիի հիշատակին և այս ֆաղափի բնակիչներուն՝ աղբբջանցիներուն, հայերուն, ռուսներուն:

Կօրենեմք Աղբբջանի բարեխնամ կառավարությունը, Աղբբջանի աշխատասեր և ազնիվ ժողովուրդը և կաղոթենք, որ Տիրոջ Աշը լինի այս երկրին վրա, որպեսզի բոլոր սպրին խաղաղությամբ, սիրով: Մեր Եկեղեցին միշտ ֆարգած է խաղաղություն, որպեսզի այն տիրապետե, իշխե, և՛ մեր, և՛ բոլորի վրա:

Կաղոթենք ձեր բոլորիդ համար: Աստված ձեզ հեռու պահե ամեն փորձություններն և պարգևե խաղաղ, բարի և երջանիկ օրեր:

Ողջ ետեք բոլորդ, և սեր «Տեառն մերոյ Ֆիսուսի Քրիստոսի եղիցի բնդ ձեզ և բնդ ամենեսեանդ, ամէն»:

Այնուհետև բարի գալստյան սրտագին և հուզիչ խոսք է ասում արժանապատիվ Տ. Նշան Բանան Բեյլերյանը.

«Վեհափառ Տե՛ր, Թույլ տվեք, Ձեր շնորհաբեր այս այցելության ուրախ տոնի առթիվ, Կիրովաբադի հավատացյալ հայ համայնքի կողմից սրտագին բարի գալուստ մղթիկ Ձերդ Վեհափառության:

Շնորհազարդ Տե՛ր, երազ ու բուռն ցանկություն էր տեսնել և վայելել Ձեր օրհնարեր ներկայությունը մեր մեջ:

Այսօր, հաղար փառք Տիրոջ, որ ողջ ու առողջ եկել եք Ձեր հեռավոր գավառների այցելության: Յնժում են մեր սրտերը, տեսնելով սրբելի և երիտասարդ, բայց կորովի Հայրապետիդ քաջառողջ և կենսուրախ ժպտով:

Կիրովաբադի ժողովուրդիդ, առաքելազարդ Հայրապետ, նման ուրախություն դացված է եղել շատ վաղուց: Սրանից՝ 60 տարիներ առաջ միայն, 1898 թվականին, այստեղ այցելել է երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկը: Այսօր, հայրապետական երկրորդ այցելության խանդավառությամբ է ապրում հայ հավատացյալ ժողովուրդը:

Եվ կարծեք ամեն տեղ հասնող, բոլորին կարեկցող, ուրախացնող, հայրենասեր Հայրիկն Հայոց, հարություն առած և մի քիչ էլ երիտասարդացած, շրջում է որպես հրավիրակ Հայաստանյայց՝ բովանդակ հայությունը հավաքելու Մայր Հայրենիքի հողի վրա, Ս. Էջմիածնի սուրբ կամարների տակ:

Վեհափառ Տե՛ր, այսօր նույն այդ ժողովրդի գավառները սիրում են Ձեզ կոչել նոր

օրերի, մե՛ր օրերի Հայրիկն Հայոց ջերմ առնունով:

Հայրիկ... և Դուք այդ նվիրական անունով կոչվեցիք Մայր Աթոռից մինչև Փարիզ, Լոնդոն, մինչև գոնդոների քաղաքը՝ Վենետիկ, մինչև մայրիների աշխարհը՝ Լիբանան, երբեմնի փարավոնների աշխարհը՝ Նգիպտոս, մեծարվեցիք, սիրվեցիք, վայելեցիք Ձեր ժողովրդի սերը, գուրգուրանքը, նվիրվածությունն ու որդիական հարգանքը:

Եվ ահա, այդ բոլորից հետո, Վեհափառ Տե՛ր, Դուք այսօր մեր մեջ եք, մեր սրտում, մեր հոգում. Դուք բարով եկաք, հաղար բարով:

Այս սրտաբույս խոսքերից զգացված՝ Վեհափառ Հայրապետը նորից խոսում է ժողովուրդին, շնորհակալություն հայտնում ջերմ և սիրայիր ընդունելության համար, հորդորում համախմբվել Հայ Եկեղեցու շուրջ, Աղբբջանի առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետի շուրջը և շենացնել Հայ Եկեղեցին և լինել օրինապահ, աղնիվ քաղաքացիներ:

Ապա ժողովուրդը ջերմությամբ ու կարոտով համբուրում է Վեհափառ Հայրապետի Աշը:

Եկեղեցու ընդարձակ և կանաչազարդ բակում եկեղեցական խորհուրդը կազմակերպել է ճաշկերույթ, որին մասնակցում է նաև ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը օրհնում է սեղանը, Ընդառաջելով հավատացյալ ժողովրդի բուռն թախանձանքին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իր մեկնումը մեկ օրով հետաձգել և ներկա լինել երկկողան ժամերգության: Այս լուրը ժողովուրդն ընդունում է երկարատև ծափահարությամբ:

Խոսք է առնում Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ ժողովուրդ, Մենք եկեղեցիին մեջ հոգևոր մխիթարություն ստանալեն հետո հրավիրվեցանք այստեղ հաշի: Շնորհակալություն Կիրովաբադի ժողովուրդին և բոլոր անոնց, որոնք պատրաստած են այս եռօրյա սեղանը: Մենք անգամ մըն ալ համոզվեցանք այստեղ, որ հայ ժողովուրդը, ուր ալ որ քաղաք, կմեա, հարագատ ու հավատարիմ իր Եկեղեցիին և Մայր Աթոռին: Հայ ժողովրդի փրկությունը անոր հավատին մեջ է. հավատի՛ դեպի այս Եկեղեցին, հավատի՛ դեպի Ս. Էջմիածինը և Մայրենի Հողը: Եվ ինչպես որ ամուր են այս եկեղեցիի ֆաբեր, ալպես ալ ամուր է հայ ժողովրդի հոգին: Մենք փոքր ժողովուրդ ենք, բայց ինչպես բոլոր փոքր ժողովուրդները, նույնպես և հայ ժողովուրդը իրավունք ունի ապրելու իր հավատով, աշխատանքով, քաղաքով և ազնիվ գգացումներով: Մենք չենք ուզեր կորսվիլ, այլ ապրիլ, շինել ու ստեղծագոր-

ծել: Հայ ժողովուրդը երբեք պատերազմ չէ ուզած, երբեք չէ հափշտակած ուրիշներու ունեցվածքը կամ ուրիշի հողը, այլ ապրել է սիրով և խաղաղությամբ՝ բոլոր ժողովուրդներու հետ: Մենք շատ ուրախ ենք, որ կապրինք Սովետական իշխանության հովանիին տակ, իշխանություն, որ կհարգե ժողովուրդներու ինքնորոշման իրավունքը, կրոնական գաղափարներու ազատությունը, աշխատանքը և բոլոր արդար իղծերը: Մենք խորապես կհավատանք, որ այս մեծ, լուսավոր ճանապարհը պիտի բացվի աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար: Մենք բո-

րոլորը ուղի են կանգնում և բուռն ծափահարությամբ միանում Վեհափառ Հայրապետի մաղթանքներին:

Նույն օրը, ցերեկվա ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս քաղաքային Սովետ, ուր արժանանում է շատ ջերմ և հարգալից ընդունելության:

Ծրեկոյան ժամը 5.30-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Կիրովաքաղից 16 կիլոմետր հեռու մեծ գյուղ և բանաստեղծ Նիզամի Գյանջևիի գերեզմանը, որի վրա կառուցված է փառավոր կոթող-հուշարձան: Վեհափառ Հայրապետին դիմավորում են պ.



ԿԻՐՈՎԱՔԱՔԱՆԻ ՀԱՎԱՏԱՑՑԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ

լորս մեր դիրքերեն, մեզի բաժին ընկած չափով, մեր պարտականությունը պիտի կատարենք այդ լուսավոր ճամբուն վրա:

Թող երկա՜ր ապրի Սովետական մեր մեծ Հայրենիքը: Կեցցե՛ն Սովետական Միության բոլոր ժողովուրդները: Կեցցե՛ Ադրբեջանի եղբայրական ժողովուրդը: Կեցցե՛ մեր հաճախ, մեր քաջարի, մեր շինարար հայ ժողովուրդը:

Մամեդովը, քաղաքային Սովետի, մուսուլմանների ներկայացուցիչները և բազմաթիվ հավատացյալներ: Աշխարհահռչակ բանաստեղծի շիրմի վրա Վեհափառը դնում է ծաղկեպսակ, որի վրա ադրբեջաներեն և հայերեն գրված է. «Ադրբեջանական մեծ բանաստեղծ Նիզամի Գյանջևիին, Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մալաթիայի Պատրիարք Վաղդեն Ա-ից՝ ի նշան խորին հարգանքի»:

Վեհափառ Հայրապետը խոսք է առնում.

«Նիգամի Գյանջեին ոչ միայն Ադրբեջանի ժողովրդի սեփականությունն է, այլև ամբողջ մարդկությունն: Ան հպարտությունն ու պարծանքն է ադրբեջանցի ժողովրդին: Ամեն սերունդ, վստահ ենք, որ այսպիսի քառմ ծաղիկներ պիտի դնեն անոր դամբանին, որովհետև Նիգամին այլ անմահ ծաղիկներ է սփռած մարդոց հոգիներում մեզ: Նիգամին մեռած չէ: Քանի մարդկությունը կապրի, կապրի նաև Նիգամին և կծառայե իբրև ներշնչման ու հոգիներու ազնվացման աղբյուր»:

գրել է նաև 25000 ոտանավոր: Մի ծերունի խոր ապրումներով արտասանեց մեծ բանաստեղծից կտորներ՝ աշխատասիրության, խաղաղության և բարեկամության վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետը հոմանիստ բանաստեղծի գերեզման-հուշարձանից հրաժեշտ է առնում լավագույն տպավորություններով:

Նրեկոյան ժամը 6-ն է: Վեհափառ Հայրապետին առաջնորդում ենք եկեղեցի, ուր հավաքվել է մեծ բազմություն: Նկիև են բուրր, երիտասարդ թի ծեր, փոքր թի մեծ,



ՊԵՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վերջում Վեհափառ Հայրապետը իր տպավորություններն է գրի առնում այցելուների ոսկեմատյանում:


Դամբարանի պատերին կան նկար-գրվագներ մեծ բանաստեղծի հուշակավոր երկերից՝ «Խոսքերու նամե», «Մեջնուն», «Խոսկանդար նամե», «Յոթ գեղեցկուհիներ» և այլն: Նիգամին եղել է շատ բեղմնավոր գրող: Բացի վերոհիշյալներից Նիգամին

հազարներով: Հավաքված բազմությունը անվերջ ծափահարությամբ և սրտագին կնքեցներով է դիմավորում Վեհափառ Հայրապետին: Այդ հուզիչ և սրտառուլ տեսարանը միայն բավական է համոզվելու համար, թե որպիսի համակրանք է տածում հայ հավատացյալ ժողովուրդը իր սիրելի Վեհափառ Հայրապետի և իր հարազատ նկեղեցու հանդեպ: Նկեղեցում պաշտված երեկոյան

ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Կիրովաբադի հավատացյալ և հյուրասեր հայ ժողովրդից, օրհնում բոլորին, հորդորում միշտ հարազատ մնալ մեր սուրբ կրոնին, մեր հավատին և մեր Հայրենիքին:

Սեպտեմբերի 25-ին, շորեքշաբթի օր, լավագույն տպավորություններով և քաղցր հուշերով թողնում ենք Կիրովաբադը և վաղ առավոտյան ավտոմեքենաներով ճանապարհվում դաշտային Ղարաբաղի միջով, ապա հասնում լեռնային Ղարաբաղ: Թվում է, թե մենք մտել ենք մի նոր աշխարհ, որն

դրժադիր կոմիտեի խորհրդի նախագահ պ. Ռուբեն Շահրիմանյանը և կոլտուրայի բաժնի պետ պ. Արտաշես Բալայանը հարգալից պատասխանում են Վեհափառ Հայրապետի մի շարք հարցումներին՝ Ղարաբաղի ազգաբնակչության, մշակույթի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ մարզերի վերաբերյալ: Ղարաբաղի ինքնավար մարզը ունի մոտ 150 000 ազգաբնակչություն, որի 95 տոկոսից ավելին կաղմում են հայերը: Հայաբնակ լեռնային Ղարաբաղի ամեն գյուղում կա հայկական յոթնամյա և տասնամյա դպրոց, իսկ Ստեփանակեր-



ԿԻՐՈՎԱՐԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՆՑՈՒՄ

իր քաղաքներով և գյուղերով, աշխարհագրական դիրքով և բնական գեղեցկություններով հարազատ է մեզ, մոտիկ մեր սրտին: Գուցե այդ նրանից է, որ այստեղ ամեն մի կտոր հողի, քարի և հուշարձանի վրա արձանագրվել են մեր ժողովրդի դարավոր պատմության հերոսական էջերը:

Ստեփանակերտում իջևանում ենք հայկական ոճով շինված գեղեցիկ և մաքուր հյուրանոցում:

Կարճ հանգստից հետո Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Ղարաբաղի մարզգործկոմի խորհրդին, ուր ղեկավարեն ընդունվում է և հյուրասիրվում: Մարզային


տում՝ անբեք լրիվ միջնակարգ դպրոցներ և մի քանի տեխնիկոմներ: Ղարաբաղցիք իրենց բարձրագույն կրթությունն ստանում են Երևանում, Բաքվում և Միուսյան մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ղարաբաղում լույս են տեսնում «Սովետական Ղարաբաղ» և այլ հայերեն թերթեր: Ժողովուրդը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Ղարաբաղում աճում են ցորեն, խալով, եգիպտացորեն և այլ կարևոր միստոսերներ: Կան կահույքի, փայտամշակման, գինու, կոնյակի, տրիկոտաժի գործարաններ: Վերջերս հայտնաբեր-

վել են տուֆագույն մարմարի հանքեր շատ մեծ պաշարներով:

Հարաքաղի կենտրոնական քաղաքն է Ստեփանակերտը, որն ունի 18 000 հայ բնակչություն: Այս քաղաքն ունի ընդամենը

զարդ հիանալի շենքերով, սիրուն և երիտա-սարկ քաղաք է Ստեփանակերտը:

Ստեփանակերտից 16 կիլոմետր հեռավորության վրա, 1400 մետր բարձր լեռների



ՆԻՋԱՄԻ ԳՑԱՆՋԵՎԻԻ ԴԱՄԱՐԱՆԻ ՄՈՏ

մի քանի տասնյակ տարիների պատմու-թյուն: Իր մաքուր, ասֆալտապատ փողոց-ներով, փարթամ պուրակներով, կամարա-

վրա թառել է պատմական Շուշին, որն անց-յալում այնքան կարևոր դեր է խաղացել մեր ժողովրդի կյանքում, իբրև մեր մշա-

կույթի և լուսավորության խոշոր կենտրոն-
ներից մեկը:

Մեկնում ենք Շուշի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են
մարզպետը և իր կուսակցության ղեկավար
պ. Ա. Բալայանը և պ. Մամեդովը: Մեր մե-

թաղաքի միջից քայլելով դնում ենք դեպի
նշանավոր Ամենափրկիչ եկեղեցին, որը
կոչում են Ղազանչեցոց եկեղեցի: Շինված է
մոտ 180 տարի առաջ, կաթնագույն կարծր
քարից: Եկեղեցու արտաքինը մեզ հիացնում
է իր ճարտարապետությամբ: Վեհափառ Հայ-



ՇՈՒՇԻԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՋԱՆԳԱՎԱՏԱՆ ԱՌԱՋ

քենաները բարձրանում են ոլորապտույտ
ճանապարհներով դեպի վեր, սարն ի վեր:
Հեռվից երևում են Շուշիի մեծ գերեզմանո-
ցը, եկեղեցին և փլատակների մի մասը:

Իրապետը լուռ աղոթում է: Աղոթում ենք և
մենք ու մտովի խոնարհվում նրանց առջև,
որոնց ճարտար ձեռքերով կառուցվել է այս
հրաշակներն եկեղեցին: Մանրամասնորեն դիտում

ենք նրա առանձին մասերը, յուրահատուկ ձևով շինված երկշարք սյուների, խորանների, ամենաման կամարները: Ամեն ինչով հիացած ենք և հափշտակված: Եկեղեցին շատ լուսավոր է և ընդարձակ: Վեհափառ Հայրապետը մտածում է անմիջական որոշ նորոգություններ կատարելու մասին, որպեսզի պատմական այս հույակապ կոթողը պահպանվի:

Ամենափրկիչ եկեղեցուց քալելով գնում ենք դեպի Շուշիի մյուս ծայրում գտնվող փոքրիկ եկեղեցին, որը կոչվում է Կանաչ եկեղեցի:

Ներով և անտառապատ լեռներով: Որքան մոտենում ենք Գանձասարի կողմերին, այնքան ավելի անտառները թանձրանում են: Գեղեցիկ է Լեռնային Ղարաբաղի բնութայինը: Հասնում ենք Վանքաշեն գյուղը: Գյուղացիները, մի պահ իրենց աշխատանքը թողած, կալերից ընդառաջ են վազում Վեհափառ Հայրապետին և երկյուղածությամբ համբուրում նրա Աջը: Վեհափառ Հայրապետը չորուցում է նրանց հետ և բոլորին բաժանում Ս. Էջմիածնից բերած փոքրիկ խաչեր: Ապա գյուղի միջով անցնում ենք քայ-



ԳԱՆՁԱՍԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՆՔԸ

երեկոյան Վեհափառ Հայրապետը իր հետևորդներով վերադառնում է Ստեփանավերտ:

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի օր, ավտոմեքենաներով առավոտյան ժամը 9-ին մեկնում ենք դեպի Գանձասար, Ստեփանավերտից մոտ 75 կիլոմետր հեռավորության վրա: Մեզ ուղեկցում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի գործադիր կոմիտեի կուլտուրայի բաժնի վարիչ պ. Ա. Բալայանը: Անցնում ենք դժվարանցանելի ճանապարհ-

չելով: Մենք գտնվում ենք սարի ստորոտում, օրտեղից մինչև Գանձասարի վանքը մեկ ու կես կիլոմետր է: Ավտոմեքենան վեր է բարձրանում, մագլցելով քարից քար, թփից թփ: Այնուհետև կանգ ենք առնում և կամաց-կամաց քալելով բարձրանում վանքը, որը շուրս կողմից շրջապատված է բարձր պարիսպներով: Մտնում ենք վանքը, աղոթում և բոլորս մեկ երգում «Ուրախ լեր, Ս. Եկեղեցի» շարականը: Համբուրում ենք Ս. Սեղանը և ապա ծանոթանում վանքին, որը կառուցվել է 12-րդ դարում և այժմ էլ

գտնվում է համեմատաբար բարձր փխճակում: Գալիթը կամ ժամատուռը, ինչպես երևում է, ավելի վաղ է կառուցվել: Հոյակապ է կաթողիկեն իր բազմաթիվ նուրբ քանդակներով: Վանքի եկեղեցին շատ մեծ է, բայց հույժ գեղեցիկ է: Ներսիս սյունիք չկան, սակայն կան բազմամիտ կամարներ: Որմերի վրա կան բազմաթիվ արձանադրություններ: Գալթում կողք-կողքի թաղված են Գանձասարի կաթողիկոսները, որոնց գերեզմանների վրա կատարում են հոգեհանգիստ: Վանքի ամեն մի քարը, որմը, կամարը և քանդակը խոստեն վկաներն են մեր ժողովրդի ճարտարապետական հանձարի:

Այնուհետև մտնում ենք միաբանական խուցերը, Վեհարանը, որոնք քայքայված վիճակում են:

Գանձասարի վանքը, իբրև ճարտարապետական փառահեղ կոթող, մեր հին և արժեքավոր եկեղեցական հուշարձաններից մեկն է: Սակայն նրա արժեքը միայն սրանում չէ: Գանձասարի վանքը եղել է մեր հոգևոր և իմացական մշակութթի մեծ կենտրոններից մեկը, ինչպես նաև մեր ազգային-ազատագրական շարժման օջախներից մեկը: Այստեղ են դարձնվել հայ ժողովրդի ազատագրության լուսավոր գաղափարներն ու ծրագրերը, այստեղ են գործել մեր ազգային ազատագրական շարժման հայրենասեր և անձնվեր գործիչները՝ Իսրայել Օրին, Մինաս վարդապետը, Սայի և Հովհանն կաթողիկոսները և ուրիշներ:

Գանձասարի վանքի դիրքը չքնաղ է: Չորս բլուրը փարթում կանաչ է, արտոններ, անտառներ: Իջնում ենք խոր ձորը և ըմպում սառնորակ ջուրը աղբյուրի, որ կոչվում է Վանքի աղբյուր: Այստեղ են հավաքվել վանաշենի աշխատասեր, հյուրասեր և հավատացյալ գյուղացիները, որոնք Վեհափառ Հայրապետի տոբերի առաջ ոչխար են մտրթում և ճոխ սեղան պատրաստում: Սեղանի վրա Վեհափառ Հայրապետը հոգեշունչ և հայրենասիրական խոսքեր է ասում վանաշենցիներին և հորդորում հավատարիմ մնալ մեծ սուրբ հավատին և Մայր Հայրենիքին:

Սեպտեմբերի 27-ին, ուրբաթ օր, մեկնում ենք Ստեփանակերտից դեպի Ամարասի վանքը, անցնելով մոտ 80 կիլոմետր ճանապարհ: Վեհափառ Հայրապետին ընկերանում են պ. Մամեդովը, պ. Ա. Բալայանը: Ամարասի կողմերում լեռները մերկանում են կանաչից և ամայանում: Հեռվում, ձորի մեջ երևում է Ամարասի վանքը, կառուցված, ըստ ավանդության, Ե դարում և հիմնովին վերաշինված վերջին դարերում: Այստեղ թաղված է Ս. Գրիգոր Լուսավորչի թոռ

Գրիգորիսը, որն Աղվանից կաթողիկոսն էր: Վանքը փոքր է և նման հղկված քարերով շինված քառակուսի տան: Ավելի գեղեցիկ է այն ներսից: Վանքը չորս կողմից շրջապատված է երկհարկանի բարձր շենքերով: Դռանք եղել են միաբանների խուցերը, առաջնորդարանը, հյուրանոցը և այլն: Շրջակա ընդարձակ տարածությունները ծածկված են թթենու անտառներով:

Գյուղի կոլտնտեսության նախագահը Վեհափառ Հայրապետին հրավիրում է այդի: Սկսվել է այգեկոտը: Աշխատանքը թողած, բոլորը հավաքվում են մեր շուրջը: Վեհափառ Հայրապետն օրհնում է բոլորին, այգիները, դաշտերը և նրանց արդար աշխատանքը: Ուզում են հատուկ սեղան պատրաստել, բայց ժամանակը չի թույլատրում սպասելու:

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 9-ին ինքնաթիռով մեկնում ենք Երևան և հասնում ժամը 10.50-ին: Օդանավակայանում Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը ջերմորեն դիմավորում է Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու է եկել նաև Հայկական ՍՍՄ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է դեպի Ս. Էջմիածին: Վանքի դարբասից, զգեստավորված, միաբանության և Հոգևոր ճեմարանի աշակերտության ու հավատացյալների խումբ քաղցրությամբ ուղեկցությամբ, ճշրաշափառ-ով, խնկով ու դանդերի ցրածաղին յողանջով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար և գոհարանական աղոթք մատուցում Իջման Ս. Սեդանթի առջև:

Գերաշնորհ Ս. Եզնիկ եպիսկոպոսը ամբողջ միաբանության անունից ջերմ խոսքերով բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում խոսք անելով, ասում է.

«Շնորհակալ եմ, որ Եզնիկ սրբազանը, Մայր Աթոռի միաբանության անունեն, ջերմ խոսքերով կղիմավորե Մեզ:

Մեր ներքին թեմերում այս վերջին հայրապետական այցելությունն էր, որ տվին: Ինչպես ամեն առիթով, այս անգամ ևս տեսանք և հաստատեցինք, որ մեր ժողովրդի օավակները, ուր այ որ գտնվին, իրենց սրտի բոլոր թեղերով ամուր կապված են Ս. Էջմիածնին և մեր վերածաղկած Մայր Հայրենիքին: Մենք տեսանք, որ Աղբյուրների մեջ ապրող հայությունը ևս անբաժանելի մասը կկազմե այն մեծ գանգվածին, որ

կոչվի հայ ժողովուրդ: Իրոք չափազանցած չէինք ըլլար, եթե ըսեինք, որ թե՛ Մենք և թե՛ այնտեղի հայերը ապրեցանք պատմական օրեր: Մեր ակնկալածեն շատ ավելի ջերմ սիրո և խանդավառության արտահայտություններ տեսանք այնտեղ:

Այցելեցինք Բաֆու, ուր պատարագեցինք և քարոզեցինք հոծ բազմության ներկայությամբ:

Իսկ այն, ինչ պատահեցավ Կիրովաբադի մեջ, աննկարագրելի է: Միայն տեսնել պետք էր ժողովրդի այն բազմությունը, որ կհոսեր դեպի եկեղեցի:

Ապա անցանք ինքնավար Լեռնային Ղարաբաղ և երկու օր մնացինք անոր սիրուն մայրաքաղաք Ստեփանակերտի մեջ: Այստեղ ալ Մենք շրջապատվեցանք ժողովրդի և իշխանության սիրով և ջերմությամբ:

Այցելեցինք նաև Շուշի, տեսանք հին անցյալեն մնացած տխուր ավերակներ, ինչպես նաև Ամենափրկիչ հոյակապ տաճարը, որն իր ներքին հորինվածքի ձևով կրնանք համեմատել այս Ս. Տաճարին հետ:

Ապա գացինք ուխտի Գանձասարի վանքը: Բարձր լեռան մը գագաթին հաղթական

կանգնած է ԺԹ դարուն կառուցված այդ հույակապ տաճարը և շատ լավ վիճակի մեջ է: Մեր նախնիքները այնքա՛ն ամուր են շինեց այդ վանքը, որ հետագա ոչ մի փոքորիկ չէ կրցեր գայն ավերակի վերածել: Գանձասարի վանքին մեջ է, որ ավելի քան 200 տարիներ առաջ սկսավ խմորվիլ հայ ժողովրդի ազատագրական շարժման գաղափարը: Դավիթ բեկ, Իսրայել Օրի, Մինաս վարդապետ և ուրիշ գործիչներ ապրած են այնտեղ, ծրագրած և գործած են հանուն հայ ժողովրդի ազատագրության:

Վերջապես երեկ այցելեցինք Ամարասի վանքը, որ սկիզբ կառնե Ե դարեն և ուր կպահպին մասունքները Ս. Գրիգոր Լուսավորչի քոռան՝ Գրիգորիսի:

Մենք վերադարձանք հովվապետական Մեր այցելությունեն ավելի ոգեշնչված, ավելի խանդավառ և ավելի լավատես:

Թող Տերը օրհնե հայ ժողովուրդը, Մայր Աթոռը և մեր միաբանությունը, և առաջնորդե մեզ Իր լույսով, Իր իսկ հիմնած Հայաստանայց Ս. Եկեղեցիին փառքին համար, ամենք:

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ,

